ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/171/1/2024

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 28 օգոստոսի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող) Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի օգոստոսի 28-ին քննելով «Բարգավաճ Հայաստան» կուսակցության (այսուհետ՝ նաև Կուսակցություն) հաշվետու ժամանակահատվածում պաշտոնատար անձ՝ կուսակցության նախագահ (այսուհետ՝ պաշտոնատար անձ), Գագիկ Ծառուկյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/171/1/2024 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Տ

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետով սահմանված Հանձնաժողովի լիազորությունների շրջանակներում, նույն օրենքի 40.1-ին հոդվածով սահմանված կարգով իրականացնելով նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով վերապահված գործառույթը և հիմք ընդունելով Կուսակցության 2022 թվականի տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Տարեկան հաշվետվություն) ստուգման և աուդիտի արդյունքում վերհանված տվյալները, պարզել է, որ Կուսակցության կողմից

չի պահպանվել «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջը, այն է՝ Կուսակցությունը «Երևանի Արարատ ԿԳՕ» ԲԲ ընկերությունից նվիրատվություն ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում այն չի փոխանցել պետական բյուջե:

1.2 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի մարտի 15-ին Կուսակցությանն է ուղղվել թիվ 01/700-2024 գրությունը, որով Հանձնաժողովը խնդրել է Կուսակցության 2022 թվականի տարեկան հաշվետվության ստուգման նպատակով հնգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել Կուսակցության՝ 2022 հաշվետու տարվա բոլոր բանկային հաշիվների (բացառությամբ նախընտրական հիմնադրամների) վերաբերյալ տեղեկությունները, այդ թվում՝ բանկի կողմից վավերացված բանկային հաշիվների մուտքերի և ելքերի վերաբերյալ քաղվածքները, տարեկան հաշվետվության «2.5 Անշարժ գույքը շուկայական արժեքից էականորեն ցածր գնով կուսակցությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու արդյունքում հաշվարկված մուտքեր» աղյուսակում ներկայացված գործարքների վերաբերյալ պայմանագրերը և այդ պայմանագրերից ծագող իրավունքների պետական գրանցումը հաստատող փաստաթղթերը:

Ի լրումն վերոգրյալի՝ Հանձնաժողովը նշված գրությամբ խնդրել է Կուսակցության 2022 թվականի տարեկան հաշվետվության աուդիտորական եզրակացությամբ, ինչպես նաև «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթով հայտնաբերված անհամապատասխանությունների և խախտումների հետ անհամաձայնության դեպքում ներկայացնել դրանց վերաբերյալ Կուսակցության դիրքորոշումն արտահայտող լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր:

Հանձնաժողովը նշված գրությամբ միաժամանակ հայտնել է Օրենսգրքի 206.14-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության մասին՝ Հանձնաժողովին սահմանված ժամկետում անհրաժեշտ տեղեկությունները կամ պահանջվող նյութերը չտրամադրելու համար:

1.3 Ի պատասխան Հանձնաժողովի 2024 թվականի մարտի 15-ի թիվ 01/700-2024 գրության՝ 2024 թվականի մարտի 22-ին Կուսակցության կողմից Հանձնաժողովի էլեկտրոնային փոստի հասցեին է ներկայացվել պահանջվող տեղեկատվությունը, այդ թվում նաև՝ 2022 հաշվետու տարվա կուսակցության բոլոր բանկային հաշիվների

քաղվածքները: Միաժամանակ, Կուսակցությունը հայտնել է, որ Տարեկան հաշվետվության աուդիտորական եզրակացության, ինչպես նաև «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթով հայտնաբերված անհամապատասխանությունների և խախտումների առնչությամբ անհամաձայնություն առկա չէ:

1.4 Աուդիտորական եզրակացության վերապահումով կարծիքի համար հիմք հանդիսացող 1-ին կետի համաձայն, ինչպես ներկայացված է Տարեկան հաշվետվության «Ծանոթագրություն 2» թերթի *«2.5 Անշարժ գույքը շուկայական արժեքից էականորեն ցածր գնով կուսակցությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու արդյունքում հաշվարկված մուտքեր»* աղյուսակի (այսուհետ՝ Աղյուսակ) 1-ին տողում, Կուսակցությունը 2022 թվականի ընթացքում «Երևանի Արարատ ԿԳՕ» ԲԲ ընկերությունից ստացել է Սահմանադրական օրենքի իմաստով բնեղենով նվիրատվություն, որն ըստ Կուսակցության հաշվարկի կազմել է 1 679 230 ՀՀ դրամ, սակայն աուդիտորական կազմակերպության կողմից կատարված վերահաշվարկի արդյունքում այն կազմել է 792 786 ՀՀ դրամ:

1.5 Ստուգմամբ պարզվել է, որ Տարեկան հաշվետվության «2.5 Անշարժ գույքը շուկայական արժեքից էականորեն ցածր գնով կուսակցությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու արդյունքում հաշվարկված մուտքեր» աղյուսակում լրացվել են «Երևանի Արարատ ԿԳՕ» ԲԲ ընկերությանը պատկանող, ք. Երևան, Իսակովի 9/4 հասցեում գտնվող արտադրական նշանակության անշարժ գույքն անհատույց օգտագործման իրավունքով Կուսակցությանը հանձնելու վերաբերյալ տեղեկություններ, ինչպիսի նվիրատվությունը Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1.1-ին մասի, 4-րդ մասի 2-րդ կետի կարգավորումների համատեքստում չի թույլատրվում:

1.6 Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակի տվյալների համաձայն՝ վերը նշված՝ 01-006-0307-0439 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի (այսուհետ՝ գույք) վերաբերյալ տվյալների որոնման արդյունքում պարզ է դարձել, որ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը կազմում է 14,763,359,807 ՀՀ դրամ, մինչդեռ Տարեկան հաշվետվության Աղյուսակի «Կադաստրային արժեք» վերտառությամբ 5-րդ սյունակում գույքի կադաստրային արժեքը Կուսակցության կողմից լրացվել է 14,777,703,882 ՀՀ դրամ, ինչը

գերազանցում է Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակի տվյալների համաձայն ներկայացված արժեքը 14,344,075 ՀՀ դրամով, որն էլ իր հերթին կարող է հանդիսանալ Կուսակցության Տարեկան հաշվետվությամբ և Աուդիտորական եզրակացությամբ ներկայացված հաշվարկված ոչ դրամային մուտքերի տարբերության պատճառ:

1.7 Տարեկան հաշվետվությամբ ներկայացված տվյալներով, ինչպես նաև Կուսակցության բանկային հաշիվների քաղվածքներով առկա չեն «Երևանի Արարատ ԿԳՕ» ԲԲ ընկերությունից ստացված բնեղենով նվիրատվությունը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, պետական բյուջե փոխանցած լինելու վերաբերյալ տեղեկություններ:

1.8 Վերոնշյալ իրավախախտման հայտնաբերմամբ պայմանավորված՝ Հանձնաժողովը 2024 թվականի հուլիսի 2-ի թիվ 01/2011-2024 գրությամբ Կուսակցության Պաշտոնատար անձ Գագիկ Ծառուկյանին ուղարկել է ծանուցում՝ Կուսակցության կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու զանցանքի հատկանիշներով առերևույթ իրավախախտման վերաբերյալ՝ հրավիրելով վերջինիս Հանձնաժողով՝ 2024 թվականի հուլիսի 9-ին՝ ժամը 14:30-ին՝ մասնակցելու Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 2024 թվականի հուլիսի 16-ին՝ ժամը 15:30-ին՝ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու: Գագիկ Ծառուկյանի կողմից նշված գրությունը ստացվել է 2024 թվականի հուլիսի 8-ին:

1.9 Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու վայրի և ժամի մասին պատշաճ ծանուցված Գագիկ Ծառուկյանը չի ներկայացել Հանձնաժողով, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ինչպես նաև մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելը չի ներկայացրել միջնորդություն այն հետաձգելու համար: 2024 թվականի հուլիսի 9-ին պատշաճ ծանուցված Գագիկ Ծառուկյանի բացակայությամբ կազմվել է թիվ

ՎԻՎ/339/2024 արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.10 Հիմք ընդունելով Գագիկ Ծառուկյանի ներկայացուցիչ Սմբատ Մինասյանի կողմից 2024 թվականի հուլիսի 16-ին Հանձնաժողով մուտքագրված թիվ Մ-3218-2024 գրությամբ ներկայացված միջնորդությունը՝ Հանձնաժողովը նշանակված գործի քննությունը հետաձգել է և նշանակել 2024 թվականի օգոստոսի 14-ին՝ ժամը 14:30-ին, և Հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 31-ի թիվ 01/2362-2024 գրությամբ ծանուցել վարույթի մասնակցին վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին:

1.11 Հիմք ընդունելով Գագիկ Ծառուկյանի ներկայացուցիչ Սմբատ Մինասյանի կողմից 2024 թվականի օգոստոսի 14-ին Հանձնաժողով մուտքագրված թիվ Մ-3634-2024 գրությամբ ներկայացված միջնորդությունը՝ Հանձնաժողովը նշանակված գործի քննությունը հետաձգել է և նշանակել 2024 թվականի օգոստոսի 28-ին՝ ժամը 15:00-ին, և Հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 14-ի թիվ 01/2582-2024 գրությամբ ծանուցել վարույթի մասնակցին վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին:

1.12 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված (հիմք՝ AL0124028099AM հետադարձ հանձնման ծանուցագիր) Գագիկ Ծառուկյանի ներկայացուցիչ Սմբատ Մինասյանի ներկայությամբ 2024 թվականի օգոստոսի 28-ին՝ ժամը 15:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2024 թվականի օգոստոսի 28-ին, ժամը՝ 15:00-ին նշանակված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում Կուսակցության պաշտոնատար անձ Գագիկ Ծառուկյանի ներկայացուցիչ Սմբատ Մինասյանը հայտնել է, որ «Երևանի Արարատ ԿԳՕ» ԲԲ ընկերության կողմից Կուսակցությանն անհատույց օգտագործման իրավունքով տարածք հանձնելու արդյունքում Կուսակցությանը 792,786 ՀՀ դրամի չափով չթույլատրված բնեղենով նվիրատվությունը, օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե

չփոխանցելու արարքը կատարվել է տեղյակ չլինելու պատճառով: Միաժամանակ նշել է, որ հետագայում՝ 2023 թվականից, կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/171/1/2024 գործում առկա նյութերը, Կուսակցության Տարեկան հաշվետվությամբ ներկայացված տվյալները՝ համադրելով դրանք Կուսակցության բանկային հաշիվների քաղվածքների հետ և հաշվի առնելով Աուդիտորական եզրակացությամբ հայտնաբերված առերևույթ խախտումները՝ կատարել հանգամանքների ուսումնասիրություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 2022 թվականի ընթացքում Կուսակցության պաշտոնատար անձ Գագիկ Ծառուկյանի կողմից չի պահպանվել Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1.1-ին, 4-րդ մասի 2-րդ կետով և նույն հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջը, այն է՝ Կուսակցությունը «Երևանի Արարատ ԿԳՕ» ԲԲ ընկերությունից չթույլատրված նվիրատվություն ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, այն չի փոխանցել պետական բյուջե, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը: Հաշվարկված (վերահաշվարկված) բնեղենով նվիրատվության չափով գումարը Կուսակցության կողմից պետական բյուջե չի փոխանցվել, որը հավաստվում է Տարեկան հաշվետվությամբ ներկայացված տվյալներով և Կուսակցության բանկային հաշիվների քաղվածքներով:

Տարեկան հաշվետվության «2.5 Անշարժ գույքը շուկայական արժեքից էականորեն ցածր գնով կուսակցությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու արդյունքում հաշվարկված մուտքեր» աղյուսակում լրացվել են «Երևանի Արարատ ԿԳՕ» ԲԲ ընկերությանը պատկանող, ք. Երևան, Իսակովի 9/4 հասցեում գտնվող արտադրական նշանակության անշարժ գույքն անհատույց օգտագործման իրավունքով Կուսակցությանը հանձնելու վերաբերյալ տեղեկություններ, ինչպիսի նվիրատվությունը Սահմանադրական օրենքի 24-րդ

հոդվածի 1.1-ին մասի, 4-րդ մասի 2-րդ կետի կարգավորումների համատեքստում չի թույլատրվում:

3.2 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Գագիկ Ծառուկյանը հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը՝ Կուսակցության նախագահը:

3.3 Կուսակցության կանոնադրության 10.13-րդ կետի «զ» ենթակետի համաձայն՝ Կուսակցության նախագահը տնօրինում է Կուսակցության գույքը և դրամական միջոցները:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներն են՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում և կարգով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների (այսուհետ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվություններ) ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգումը:

4.2 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը:

4.3 Սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ներառյալ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվության ստուգումն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն

օրենքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով:

4.4 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1.1-ին մասի համաձայն՝ նվիրատվություն են համարվում նաև կուսակցության օգտին անհատույց աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը, կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցումը, օգտագործման հանձնումը կամ նույն կամ համանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գործող շուկայական արժեքից էականորեն ցածր գնով կուսակցության օգտին աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման կամ կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցման կամ վարձակալության հանձնելու հետևանքով կուսակցության մոտ ձևավորված խնայողությունը (բնեղենով նվիրատվությունը): Գործող շուկայական արժեքից տարբերվող գինը համարվում է էականորեն ցածր, եթե այն գործող շուկայական արժեքից տարբերվում է նվազագույնը քսան տոկոսը գերազանցող չափով:

4.5 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1.2-րդ հոդվածի համաձայն՝ սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված բնեղենով նվիրատվությունները ենթակա են հաշվարկման իրենց շուկայական արժեքով և պետք է արտացոլվեն կուսակցության տարեկան հաշվետվության մեջ, իսկ դրանց արժեքը (գումարը՝ դրամական արտահայտությամբ՝ պայմանագրով նախատեսված արժեքի և շուկայական արժեքի տարբերության մասով) ներառվում է նվիրատվությունների՝ սույն օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափում:

4.6 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ 2022 թվականի հուլիսի 22-ի «Կուսակցության տարեկան հաշվետվության ձևը, դրա լրացման և հրապարակման կարգը, հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը, ինչպես նաև տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 04-Ն որոշման Հավելված N 2-ի 37-րդ կետի համաձայն՝ «Ծանոթագրություն 2» թերթի «2.5 Անշարժ գույքը շուկայական արժեքից էականորեն ցածր գնով կուսակցությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու արդյունքում հաշվարկված մուտքեր» աղյուսակում լրացվում են անշարժ գույքը Օրենքի 24-րդ հոդվածի 1.1-ին մասի համաձայն շուկայական արժեքից

(շուկայական արժեքը որոշվում է համաձայն՝ Հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման Հավելվածի 89-րդ կետի) էականորեն ցածր գնով կուսակցությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու արդյունքում հաշվարկված ոչ դրամային մուտքերի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ (...) 7) 7-րդ սյունակում լրացվում է Օրենքի 24-րդ հոդվածի 1.1-ին մասի համաձայն հաշվարկված ոչ դրամային մուտքը (բնեղենով նվիրատվությունը) (...):

4.7 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 02-Ն որոշման Հավելվածի 85-րդ կետի համաձայն՝ Կուսակցությունների տարեկան հաշվետվության աուդիտի ընթացքում իրականացվում է կուսակցության տարեկան հաշվետվության արժանահավատության և Օրենքի ու այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանության ստուգում: Մասնավորապես, ստուգվում է՝ (...) 11) կուսակցությանն անշարժ գույքը անհատույց օգտագործման հանձնելու դեպքում՝ տարեկան հաշվետվության մեջ նշված յուրաքանչյուր անշարժ գույքի օգտագործման հանձնելու (վարձակալության) շուկայական արժեքի արժանահավատությունը, իսկ շուկայական արժեքը նշված չլինելու կամ շուկայական արժեքից էականորեն ցածր նշված լինելու դեպքում գնահատվում է յուրաքանչյուր անշարժ գույքի օգտագործման հանձնելու (վարձակալության)՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ շուկայական արժեքը (...):

4.8 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 02-Ն որոշման Հավելվածի 89-րդ կետի համաձայն՝ սույն Կարգի 85-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանված դեպքում անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու շուկայական արժեքը որոշելիս, որպես շուկայական արժեք, հիմք է ընդունվում տվյալ անշարժ գույքի կադաստրային արժեքի 2.5 տոկոսը՝ հաշվարկված տարեկան կտրվածքով:

4.9 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Նվիրատվություններ չեն թույլատրվում՝

1) օտարերկրյա պետություններից.

2) ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից, այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանցից և միջազգային կազմակերպություններից.

3) պետական և համայնքային բյուջեներից և (կամ) արտաբյուջետային միջոցներից, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն կատարվող ֆինանսավորման.

4) պետական և համայնքային կազմակերպություններից, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններից.

5) անանուն անձանցից.

6) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանցից**:**

4.10 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված չթույլատրված նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է **ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դրանք փոխանցել պետական բյուջե:**

4.11 Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.12 Օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

4.13 Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ **չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելը՝** առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհինսնապատիկի չափով:

4.14 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենսգրքի 166.1-ին, 169.28-րդ, 169.31-րդ, 189.13-րդ, 189.14-րդ, 189.15-րդ, 189.16-րդ, 189.19-189.24-րդ, 206.14-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

4.15 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.16 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.17 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.18 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.19 Օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը՝

1) տվյալ գործի քննությունը վերաբերում է, արդյոք, իր իրավասությանը.

2) ճիշտ են կազմվել, արդյոք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը.

3) գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվել են, արդյոք, դրա քննության ժամանակի և տեղի մասին.

4) պահանջվել են, արդյոք, անհրաժեշտ լրացուցիչ նյութեր.

5) վարչական պատասխանատվության ենթարկվող անձի, տուժողի, օրինական ներկայացուցիչների, փաստաբանի միջնորդությունների մասին:

4.20 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դրույթը նպատակ է հետապնդում ապահովել հաշվետու տարվա

ընթացքում Կուսակցության ֆինանսական միջոցների և ծախսերի վերաբերյալ հանրային հաշվետվողականությունն ու հրապարակայնությունը, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը, ինչպես նաև **բոլոր կուսակցությունների համար հավասար հնարավորությունների և կուսակցությունների ֆինանսական խոցելիության նվազեցման երաշխիքների ապահովումը**: Ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից մուտքերը սահմանափակելով օրենսդիրը նպատակ է ունեցել բացառել քաղաքականության մեջ բիզնեսի հնարավոր ազդեցությունները: Այս առումով, իրավաբանական անձանց կողմից նվիրատվությունների, այդ թվում՝ բնեղենով նվիրատվությունների արգելքն արդյունավետ միջոց է բիզնեսի ազդեցությունը քաղաքականության վրա սահմանափակելու համար: Որոշակի խմբային կամ կորպորատիվ շահերից կուսակցությունների կախվածությունը բացառելու նպատակով Օրենսդիրը սահմանել է ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից նվիրատվությունների արգելք, այդ թվում՝ օտարերկյա իրավաբանական անձանցից և միջազգային կազմակերպություններից:

Նշված դրույթը նպատակ է հետապնդում վերացնել կոռուպցիոն այնպիսի ռիսկեր, ինչպիսիք են, օրինակ, կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի կողմից օրենքով սահմանված չափը գերազանցող նվիրատվության ներգրավումը: Այս զանցակազմի օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել կուսակցության անդամի ակտիվ, նախաձեռնողական գործողություններով, երբ վերջիններս ձեռնարկում են կուսակցության օգտին օրենքով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունների ներգրավումը կամ պարզապես համաձայնություն են տալիս այդպիսի առաջարկություններին:

Հարկ է ընդգծել, որ Օրենսդրի կողմից նման կարգավորումների՝ սահմանադրական օրենքով ամրագրումն ինքնանպատակ չէ և միտված է կարգավորելու կուսակցությունների մուտքերը՝ կանխելու կուսակցությունների կախվածությունը ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից, նպաստելու կուսակցությունների միջև ավելի հավասար պայմանների ապահովմանը, սահմանափակելու կուսակցությունների վրա անտեղի ազդեցությունը, խթանելով արդարությունը և նվազեցնելով կոռուպցիայի ռիսկը, իսկ իրավաբանական անձանցից

նվիրատվությունների անմիջական արգելքի միջոցով Օրենսդիրը նպատակ է ունեցել նպաստել քաղաքական ֆինանսավորման հաշվետվողականությանն ու հրապարակայնությանը: Նման կարգավորումների պայմաններում սահմանափակվում են իրավաբանական անձանց ներդրումները, ինչը խթանում է քաղաքական գործընթացներում լայն հասարակության ավելի մեծ ներգրավվածությունը և մասնակցությունը: Ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից կուսակցություններին նվիրատվություններ կատարելն օրենսդրությամբ արգելելու հիմքում դրված է քաղաքական գործընթացների վրա իրավաբանական անձանց ազդեցությունը չեզոքացնելու օրենսդրի նպատակը, քանի որ իրավաբանական անձինք հաճախ ունենում են զգալի ֆինանսական ռեսուրսներ, որոնք քաղաքականության մեջ օգտագործվելիս հանրային շահի փոխարեն հանգեցնում են այդ կազմակերպությունների շահերի սպասարկմանը: Բացի այդ, վերը նշված կարգավորման արդյունքում ապահովվում է, որ կուսակցություններն ավելի շատ ակնկալեն անհատների՝ ֆիզիկական անձանց աջակցությանը, ինչը ենթադրում է հանրության աջակցություն կուսակցության վարած քաղաքականությանը կամ գաղափարախոսությանը: Մյուս կողմից, վերը նշված արգելքների բացակայության պայմաններում հասարակությունն ընկալում է, որ կուսակցությունները մեծապես ֆինանսավորվում են իրավաբանական անձանց կողմից, ինչն էլ, իր հերթին, կարող է խաթարել վստահությունը քաղաքական համակարգի նկատմամբ:

Միաժամանակ, իրավաբանական անձանց կողմից նվիրատվությունները կարող են հանգեցնել արտոնյալ վերաբերմունքի կամ քաղաքական որոշումների վրա ազդեցության ակնկալիքների և վերը նշված նորմով մեղմվում են նման ռիսկերը:

Հաշվի առնելով վերոնշյալը, Օրենսդիրը նախատեսել է Օրենսգրքի 189.16-րդ հոդվածով սահմանված զանցակազմը, որով նպատակ է հետապնդում ապահովելու օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունների ստացման դեպքում դրանց փոխանցումը նվիրատուին կամ պետական բյուջե: Օրենսդիրը, ի տարբերություն օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվությունների ստացման դեպքերի, Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված չթույլատրված նվիրատվությունների ստացման դեպքում

նախատեսում է, որ դրանք ենթակա են փոխանցման պետական բյուջե, քանի որ իրավաբանական անձանցից նվիրատվություններն առհասարակ արգելված են:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս է պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Հանձնաժողովը հաստատված է համարում, որ սույն գործով կատարված արարքով, այն է՝ Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտմամբ, խաթարվել է վկայակոչված նորմերով Օրենսդրի կողմից հետապնդվող նպատակը, քանի որ Կուսակցության կողմից չի պահպանվել օրենքով չթույլատրված նվիրատվությունն օրենքով սահմանված ժամկետում պետական բյուջե փոխանցելու պահանջը:

Վերոշարադրյալի արդյունքում սույն գործով Կուսակցության կողմից, ի թիվս այլնի, խախտվել է Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջը՝ այն է՝ Կուսակցությունը «Երևանի Արարատ ԿԳՕ» ԲԲ ընկերությունից նվիրատվություն ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, չի փոխանցել պետական բյուջե, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը:

Միաժամանակ, Կուսակցության Տարեկան հաշվետվության ստուգմամբ պարզվել է, որ «2.5 Անշարժ գույքը շուկայական արժեքից էականորեն ցածր գնով Կուսակցությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու արդյունքում հաշվարկված մուտքեր» աղյուսակում լրացվել են «Երևանի Արարատ ԿԳՕ» ԲԲ ընկերությանը պատկանող, ք. Երևան, Իսակովի 9/4 հասցեում գտնվող

արտադրական նշանակության անշարժ գույքն անհատույց օգտագործման իրավունքով Կուսակցությանը հանձնելու վերաբերյալ տեղեկություններ:

Վերը նշված օրենսդրական դրույթների և սույն գործով առկա փաստերի համադրության արդյունքում պարզ է դառնում, որ «Երևանի Արարատ ԿԳՕ» ԲԲ ընկերության կողմից Կուսակցությանն անհատույց օգտագործման իրավունքով տարածք հանձնելու արդյունքում չթույլատրված բնեղենով նվիրատվությանը համարժեք գումարը, Կուսակցությունն օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե չի փոխանցել:

Օրենսգրքի 14-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

Միաժամանակ, Կուսակցության կանոնադրության 10.13-րդ կետի «զ» ենթակետի համաձայն՝ Կուսակցության նախագահը տնօրինում է Կուսակցության գույքը և դրամական միջոցները:

Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Գագիկ Ծառուկյանը հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը՝ Կուսակցության նախագահը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով: Նշված իրավանորմով պայմանավորված՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ իր կողմից նախկինում կայացված որոշումներին (ՎԻՎ/198/2024), մասնավորապես՝ կուսակցության կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվություններն օրենքով սահմանված

ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու հետ կապված՝ նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ նշված իրավակարգավորմամբ նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործով առկա են եղել հետևյալ հանգամանքների միաժամանակյա առկայությունը.

1. Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերով քննության իրավասությունը Հանձնաժողովին վերապահելուց հետո, նշված դրույթը խախտված լինելու առնչությամբ արարքը հայտնաբերվել և նշված խախտման կապակցությամբ ծանուցում է ներկայացվել առաջին անգամ:

2. Մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը Կուսակցության կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ հաստատված օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվությունները վերադարձվել են նվիրատուներին և պետական բյուջե, իսկ չթույլատրված նվիրատվության գումարը փոխանցվել է պետական բյուջե, որի վերաբերյալ ապացույցները ներկայացվել են Հանձնաժողով:

Վերոնշյալ հանգամանքների համակցությամբ պայմանավորված՝ նշված գործով օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվությունների և չթույլատրված նվիրատվությունների գումարները նվիրատուներին և պետական բյուջե փոխանցելու փաստը վկայող ապացույցները ներկայացնելու արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով առկա փաստական հանգամանքները տարբերվում են վկայակոչված գործով ներկայացված հանգամանքներից, այն առումով, որ թեև նշված իրավակարգավորմամբ նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերով քննության իրավասությունը Հանձնաժողովին վերապահելուց հետո, նշված դրույթը խախտված լինելու առնչությամբ արարքը հայտնաբերվել և նշված խախտման կապակցությամբ վարույթի մասնակցին ծանուցում է ներկայացվել առաջին անգամ, մինչդեռ, սույն դեպքում մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը

վարույթի մասնակցի կողմից Հանձնաժողով չեն ներկայացվել Կուսակցության կողմից ստացված չթույլատրված նվիրատվությանը համարժեք գումարը պետական բյուջե փոխանցելու փաստը վկայող ապացույցներ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Գագիկ Ծառուկյանը որպես Օրենսգրքի 14-րդ հոդվածով նախատեսված Կուսակցության պաշտոնատար անձ ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (***փուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հարյուրհինգապատիկի չափով***), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող, ինչպես նաև Օրենսգրքի 33-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող որևէ հանգամանք:

Միաժամանակ, հաշվի առնելով Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի և Օրենսգրքի 40-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների պահանջները, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում նշել, որ սույն դեպքում Կուսակցության կողմից ստացված չթույլատրված նվիրատվությանը համարժեք գումարը ենթակա է փոխանցման պետական բյուջե: Հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 26-րդ հոդվածի 3-րդ մասով, Օրենսգրքի 40-րդ հոդվածով և 189.16-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Բարգավաճ Հայաստան» կուսակցության կողմից օրենքով չթույլատրված նվիրատվությանը համարժեք գումարն օրենքով սահմանված ժամկետում պետական բյուջե չփոխանցելու համար Կուսակցության պաշտոնատար անձ Գագիկ Ծառուկյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ ***100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:***

2. *Տուգանքը պետք է վճարվի գանձապետական* ***900005001335*** *«Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ»* ***հաշվեհամարին***՝ *վճարման անդորրագրի* ***«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը****:*

3. Կուսակցության կողմից ստացված չթույլատրված նվիրատվությանը համարժեք՝ 792,786 **(յոթ հարյուր իննսուներկու հազար յոթ հարյուր ութսունվեց)** ՀՀ դրամի չափով գումարը ենթակա է փոխանցման պետական բյուջե:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գագիկ Ծառուկյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ